Արձանագրություն N 2

ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անվտանգության ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18 դեկտեմբերի 2017 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Թ. Ղուկասյանը, անդամներ՝ Գ.Կոստանյանը, Կ. Պողոսյանը, քարտուղար՝ Վ. Նավասարդյանը և հայտ ներկայացրած «Պանտերա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի, «Ֆիլյոր» ՍՊԸ-ի և ՀՀ Ո Պետական պահպանության գլխավոր վարչության լիազոր ներկայացուցիչները:

Օրակարգ

ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1) ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1) ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Թ. Ղուկասյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը		
	«Պանտերա Սիքյուրիթի» ՍՊԸ ք.Երևան, Թումանյան 2-րդ փակուղի, 1-ին տուն, 2-րդ բն.	«Ֆիլյոր» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Կ. Ուլնեցու 62/12	ՀՀ Ո Պետական պահպանության գլխավոր վարչություն ք.Երևան, Քանաքեռ 14փ., 1շ.
	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող չի
	Գնային առաջարկը/ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/		
1	4 700 000	5 136 000	5 031 048

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան.

- հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք (բացառությամբ «Պանտերա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի, որի հայտի ապահովումը ցածր է հրավերով պահանջվող 5 %-ից) կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան.

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«Պանտերա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի հայտը մերժել հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով պայմանավորված, մասնավորապես հայտի ապահովման գումարը ցածր է ներկայացրած գնային առաջարկի 5 տոկոսից:**

- **ՀՀ Ո Պետական պահպանության գլխավոր վարչությանը՝**

  - ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

- **«Ֆիլյոր» ՍՊԸ-ին՝**

  - ճանաչել որպես 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացնել ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1) ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ՀՀ ք.Երևան, Արշակունյաց 23 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Թ. Ղուկասյան

անդամներ _____ Գ. Կոստանյան

_____ Կ. Պողոսյան

քարտուղար _____ Վ. Նավասարդյան